Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2019 թ. դեկտեմբերից մինչև 2020թվականի փետրվարի 18-ը ձեռք բերված հիմնական միջոցների հաշվառման, վերաբաշխման և ,,Մաքուր Մասիս ,, ՓԲԸ-ին պատկանող հիմնական միջոցները ,,Մասիսի կոմունալ տնտեսություն, բարեկարգում և բնակչության հատուկ սպասարկում,, ՀՈԱԿ-ին հատկացնելու վերաբերյալ

2019 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2020թ. փետրվարի 18-ը ընկած ժամանակահատվածում համայնքի ֆոնդային բյուջեի միջոցների հաշվին ձեռք է բերվել ընդհանուր 15 477 600 դրամի չափով հիմնական միջոցներ, նույն թվում աղբամաններ 65 հատ 10725000դրամ արժեքով, LED լուսատուներ 111 հատ 3840600 դրամ արժեքով և հակահրդեհային վահանակներ 12 հատ 912000 դրամ արժեքով:

Ձեռք բերված հիմնական միջոցները հաշվառվել է գույքի հաշվառման մատյաններում, ներառվել է հաշվապահական հաշվեկշռում որպես հիմնական միջոց:

Ստացված հիմնական միջոցներից անհրաժեշտ է 12 հատ հակահրդեհային վահանակները հատկացնել համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին և քաղաքապետարանին յուրաքանչյուրին մեկական հատ՝ սեփականության իրավունքով:

LED լուսատուները՝ 111 հատ հատկացնել արտաքին լուսավորման ցանցի սպասարկումն իրականացնող օպերատորին առկա ցանցի ԴՆԱՏ լամպերը փոխարինելու նպատակով:

Ձեռք բերված 65 հատ աղբամանները անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով հատկացնել ,, Մասիսի կոմունալ տնտեսություն, բարեկարգում և բնակչության հատուկ սպասարկում ,, ՀՈԱԿ-ին:

,,Մաքուր Մասիս,, ՓԲԸ-ն պատկանող հիմնական միջոցները /ցանկը կից հավելվածում/ հաշվեկշից-հաշվեկշիռ հատկացնել ,, Մասիսի կոմունալ տնտեսություն, բարեկարգում և բնակչության հատուկ սպասարկում ,, ՀՈԱԿ-ին անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով:

Աշխատակազմի քարտուղար Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ Ն. Սահակյան